ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ ԱՇՈՏԻ

# ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԳՈՐԾԱՐԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

**ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ-2025

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

**Գիտական ղեկավար՝** մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Իգոր Կարապետի Կարապետյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսորի պ/կ **Նաիրա Երվանդի Դալյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Մետաքսյա Ազատի Դարաքյան**

**Առաջատար կազմակերպություն՝** **Ռուս-հայկական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025թ. հոկտեմբերիի 30-ին՝ ժամը $12^{00}$ – ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025թ.-ի սեպտեմբերի 30-ին:

**Մանկավարժության 020 մասնագիտական**

**խորհրդի գիտական քարտուղար,**

**մանկավարժական գիտությունների**

**թեկնածու, դոցենտ՝** **Թերեզա Յուրիի Ազատյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության արդիականությունը:** Համաշխարհայնացման արդի միտումները ցույց են տալիս, որ անգլերենի իմացությունը դառնում է անձնային և մասնագիտական աճի և զարգացման անհրաժեշտ պայման: Ակնհայտ է, որ անգլերենի ուսուցումը չի կարող լինել արդյունավետ, եթե կիրառվում են միայն ուսուցման ավանդական մեթոդներ և տեխնոլոգիաներ: Կրթության թվայնացման արդի միտումները պահանջում են շարունակաբար ներդնել ուսուցման նոր տեխնոլոգիաներ, հնարավորինս բարձրացնել սովորողների ներքին և արտաքին ուսումնառության դրդապատճառները, անգլերենի ուսուցման գործընթացը դնել հաղորդակցական հիմքերի վրա: Այդ առումով առաջին պլան են մղվում ՏՀՏ կիրառումը, խնդիր է դրվում ուսումնասիրել և ներդնել մուլտիմեդիա տեղեկատվական տեխնոլոգիան:

21-րդ դարում մարդիկ ավելի ու ավելի շատ են ձգտում կիրառել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ: Մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառումը հնարավորություն է ընձեռում կազմակերպել փոխներգործուն դասեր, կիրառել տեսալսողական ժամանակակից միջոցներ: Մուլտիմեդիա տեխնոլոգիան դարձել է օտար լեզուներ սովորելու հիմնական գործիքը: Նրա առաջնային գործառույթն է ապահովել շփում տարբեր մասնագիտություն, ազգային պատկանելություն ունեցող մարդկանց միջև:

Օտար լեզվի դասավանդման ավանդական մեթոդներին ինտեգրվելու գործընթացում ՏՀՏ-ները թույլ են տալիս ներդնել կրթական գործընթացի այնպիսի մոդել, որը հնարավորություն է տալիս ստեղծել բաց տեղեկատվական և կրթական տարածք, բացահայտել և զարգացնել դասավանդողի և սովորողի /ուսանողի/ ստեղծագործական ներուժը, ակտիվացնել ճանաչողական գործընթացները՝ առաջին պլան մղելով համատեղ ստեղծագործական գործունեություն ծավալելու սկզբունքը: ՏՀՏ օգտագործումն օգնում է ուսանողներին զարգացնել ինքնուրույն ուսուցման հմտություններ, ստեղծագործական և քննադատական մտածողություն և բարդ իրավիճակներում ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություն:

Հարկ է նշել, որ գործարարական անգլերենը (Business English) սերտորեն միահյուսված է ոչ միայն ընդհանուր անգլերենի (General English), այլ նաև հատուկ նպատակների համար կիրառվող անգլերենի հետ (English for Specific Purposes): Հետևաբար, մեր կարծիքով, տեղին է խոսել գործարարական անգլերենի դասընթացում մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման մասին:

Հետազոտության հիմնախնդրի տեսանկյունից կարևորվում են կառավարման տեխնոլոգիաներին (Ժ. Ս. Թադևոսյան), մեդիակրթությանը (Ա. Օ. Թոփուզյան, Ա.Մ. Մանուկյան, Հ.Ս. Մուրադյան), գեղարվեստական ֆիլմերի միջոցով լեզվի ուսուցմանը ( Ի.Կ. Կարապետյան, Թ. Պ. Մաթևոսյան), գործարարական անգլերենի ուսուցմանը (Ի.Կ. Կարապետյան, Հ. Վ. Հովհաննիսյան, M. Orlando), համակարգչային տեխնոլոգիաներին (Ս.Մ. Ասատրյան, Լ. Մ. Սողոյան, Day, L. Payne, Ս. Ս. , А. А. Андреев), մուլտիմեդիալ նախագծին (О.А. Костюченко, Г. В. Прибыльская, А.С. Смагулова), բնագրային տեսանյութերի ընտրությանը (Н.Н. Сергеева, А. Е. Чиркунова, Т. Н. Критерии, А. Е. Чикунова), թվային պատմվածքի միջոցով անգլերենի (B.R. Robin, S. Behmer, R. Benmayor, J. Lambert, J. Ohler), էլեկտրոնային ուսուցմանը (D. Butucea, C. Dalsgaard, J. Ganci), առցանց ուսուցմանը (A. Chester, G. Gwynne, W. B. Crow & H. Din), թվային կրթությանը (Clemmit, Claire) նվիրված աշխատանքները:

ՏՀՏ-ների կիրառումը  գործարարական ոլորտում այսօր նորարարական է մի քանի պատճառով. նախ հասանելի է, երկրորդ՝ ճկուն և շարժական օգտագործման մեջ, երրորդ՝ բազմաֆունկցիոնալ  և ամենակարևորը՝ մոտիվացնող գործիք է: Հետևաբար՝ ժամանակակից կրթության մեջ շատ կարևոր և արդիական է գործարարական անգլերենի դասընթացում  ՏՀՏ  լայն կիրառումը, որը միտված է  կրթական գործունեության տարբեր մեթոդական հարցերի լուծմանը:

Ելնելով իրենց բազմաֆունկցիոնալությունից՝ մուլտիմեդիա տեխնոլոգիաները կրթության ժամանակակից փուլում ունեն լայն կիրառություն բուհերում օտար լեզուների, հատկապես գործարարական անգլերենի  ուսուցման ոլորտում: Մուլտիմեդիա ուսումնական միջոցների օգտագործումը կրթական տեխնոլոգիաների զարգացման բնական մակարդակ է ներկայացնում: Մուլտիմեդիա ծրագրերի վրա հիմնված ուսուցումը թույլ է տալիս առավել ամբողջական իրականացնել մեթոդական, դիդակտիկ, մանկավարժական և հոգեբանական սկզբունքների մի ամբողջ շարք՝ ուսուցման գործընթացը դարձնելով ավելի հետաքրքրական և ստեղծագործ:

Գործարարական անգլերենի ուսուցումը մուլտիմեդիա տեխնոլոգիայի և հիշողության քարտերի միջոցով  թույլ են տալիս օգտվողին ձայնագրել իր խոսքը, այնուհետև ունկնդրել այն և համեմատել մայրենի լեզվով խոսողների արտասանության հետ: Համակարգչի գրաֆիկական հնարավորությունները կարող են ցանկացած գործունեություն ներկայացնել որպես նկար: Սա հատկապես կարևոր է նոր բառեր սովորելիս, քանի որ մոնիտորի պատկերները թույլ են տալիս օտարալեզու արտահայտությունն ուղղակիորեն կապել գործողության հետ, այլ ոչ թե մայրենի լեզվով արտահայտված արտահայտության հետ:

Ավելին՝ մուլտիմեդիա տեխնոլոգիան նպաստում է տարբեր լեզվախմբերի միջև հաղորդակցությանը, ինչը հատկապես ակնհայտ է համակարգչային ցանցի օգտագործման ժամանակ: Այն կարող է լինել կա՛մ տեղական ցանց, որը միացնում է մի քանի համակարգիչներ  մեկ ուսումնական հաստատությունում, կա՛մ համացանց, որը միավորում է միլիոնավոր օգտատերերի ամբողջ աշխարհում:

Ուսուցման գործընթացում  թե՛ դասավանդողը, թե՛ համակարգչի մասնակցությունը զգալիորեն բարձրացնում են կրթության որակը: Առաջարկվող մեթոդիկայի օգտագործումն ակտիվացնում է դասավանդման գործընթացը, մեծացնում ուսանողների հետաքրքրությունն անգլերենի և ուսումնական գործընթացի արդյունավետության նկատմամբ և թույլ է տալիս ավելի խորը հասկանալ ուսումնասիրությունը:

Այս տեսանկյունից ՝մեր հետազոտության  հիմնախնդիրը պայմանավորված է.

- գործարարական անգլերենի  ուսուցման գործընթացում մուլտիմեդիա  տեխնոլոգիան օգտագործելու  անհրաժեշտությամբ,
- գործարարական  անգլերենի ուսուցման գործընթացում մուլտիմեդիա  տեխնոլոգիան բավարար չափով ներդրված չլինելու փաստով,
- սովորողների մասնագիտական և հաղորդակցական կարողունակությունների ձևավորման և զարգացման անհրաժեշտությամբ:

**Հետազոտության նպատակն** է մշակել և ՀՀ  բաձրագույն կրթության ոլորտում դասավանդվող գործարարական անգլերենի դասընթացում ներդնել մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառմամբ անգլերենի փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգ և մուլտիմեդիա տեխնոլոգիայով ստեղծված անգլերենի ուսուցման մոդել:

**Հետազոտության օբյեկտը** գործարարական անգլերենի ուսուցման գործընթացն է ՀՀ բաձրագույն կրթության ոլորտում:

**Հետազոտության առարկան** ՀՀ բանրագույն կրթության ոլորտում դասավանդվող գործարարական անգլերենի դասընթացում մուլտիմեդիա տեխնոլոգիայով անգլերենի փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգն ու մուլտիմեդիա տեխնոլոգիայով ստեղծված անգլերենի ուսուցման մոդելներն են:

**Հետազոտության վարկածը**

Եթե գործարարական անգլերենի դասընթացում ներդրվի մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառմամբ գործարարական անգլերենի փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգ և կիրառվի մուլտիմեդիա տեխնոլոգիայի սկզբունքներին համապատասխանող վարժությունների համալիր, ընտրվեն և օգտագործվեն տարաբնույթ մուլտիմեդիա միջոցներ, տեսանյութեր, վավերագրական, գեղարվեստական ֆիլմեր, պլանավորվեն և մշտադիտարկվեն մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման փուլերը, ընթացակարգերը, մշակվի մուլտիմեդիա տեխնոլոգիայով ստեղծված գործարարական անգլերենի ուսուցման մոդել, ապա լիարժեքորեն կապահովվի ուսանողների՝ լեզվանյութը յուրացնելու արդյունավետությունը:

**Հետազոտության խնդիրներն են՝**

1. ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ առկա տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները, որոնց հիման վրա հիմնավորվել են մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունները գործարարական անգլերենի դասընթացում,
2. բացահայտել և բնութագրել մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկություններն ու սկզբունքները բուհերում,
3. բացահայտել ՏՀՏ-ների միջոցով գործարարական անգլերենի դասընթացի արդյունավետության բարձրացման հնարավորությունները,
4. հիմնավորել մուլտիմեդիա տեխնոլոգիայի միջոցով ՀՀ գործարարական անգլերենի փոխներգործուն ուսուցման անհրաժեշտությունը,
5. մշակել մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառմամբ գործարարական անգլերենի փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգ,
6. մշակել մուլտիմեդիա տեխնոլոգիայով ստեղծված գործարարական անգլերենի ուսուցման մոդել, որը լիարժեքորեն կապահովի ուսանողների՝ լեզվանյութը յուրացնելու արդյունավետությունը,
7. համապատասխան փորձարարական ուսուցման ընթացքում հիմնավորել մշակված մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառմամբ գործարարական անգլերենի փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգի և ստեղծված մոդելի արդյունավետությունը:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքում** ընկած են՝

- մեդիատեխնոլոգիաների ուսուցողական նպատակներով կիրառման (Ա. Օ. Թռփուզյան, Ջ. Հ. Գյուլամիրյան),
- մուլտիմեդիա տեխնոլոգիայի հիման վրա ուսուցման սկզբունքների հիմնավորման (Андресен, Бент),
- տեղեկատվական տեխնոլոգիաների տարբեր ոլորտներում կիրառման (Ա.Ա. Աջամօղլյան, Л.И. Карташова, С. Ю. Кацко),
- ֆասիլիտացիայի տեխնոլոգիայի որպես մուլտիմեդիա տեխնոլոգիայի դիտարկման (J. Bransford, A. Brown, & R.R. Cocking),

- երկակի կոդավորման (M. James, Paivio A.) Robinson,Rhonda;Molenda, Michael;Rezabek,Landra) տեսությունները և հայեցակարգերը:

**Հետազոտության մեթոդները**

Հետազոտության առաջադիր խնդիրները լուծելու նպատակով կիրառվել են դիտման, հարցազրույցի, մոդելավորման, ինչպես նաև ՏՀՏ-ների ներդրման գործընթացում ուսուցման գործընթացների համեմատական վերլուծության, պատմահամեմատական, մուլտիմեդիա տեխնոլոգիայի գործառական և բաղադրիչային վերլուծության, վիճակագրական և մաթեմատիկական մշակման մեթոդները:

**Հետազոտության հիմնական փուլերը:**

Հետազոտությունը իրականացվել է երեք փուլով:

**Առաջին փուլում (2021-2022)**_ուսումնասիրվել է մուլտիմեդիա տեխնոլոգիան, նրա կիրառման սկզբունքները, ներդրման հնարավորությունները, առաջադրվել է հետազոտության վարկածը, հստակեցվել են առաջադիր խնդիրները:

**Երկրորդ փուլում (2023-2024)** ընտրվել են մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման այն սկզբունքները, որոնք կարող էին համապատասխան վարժությունների հիմք ծառայել: Բացահայտվել են խառն ուսուցման առանձնահատկությունները, մշակվել են ավանդական և այլընտրանքային համարվող ուսուցման մեթոդների համադրման մոտեցումներ: Հաշվի առնելով գործարարական անգլերենի ուսուցման դասընթացի առանձնահատկությունները, փորձարարական, ստուգողական խմբերում ներգրավված ուսանողների հոգեբանական բնութագրերը, նրանց ճանաչողական և հեռանկարային պահանջմունքները, ինչպես նաև լեզվական մակարդակը՝ մշակվել է վարժությունների համակարգ:

**Երրորդ փուլում (2024-2025)** իրականացվել է փորձարարական ուսուցում, որի նպատակն է եղել հիմնավորել առաջարկվող մուլտիմեդիա տեխնոլոգիայով ստեղծած անգլերենի ուսուցման մոդելի արդյունավետությունը, քանի որ այն կարող է հիմք հանդիսանալ անգլերենի ուսուցման տարաբնույթ մեթոդական համակարգերի ստեղծման համար: Հետազոտության ավարտին ամփոփվել են փորձարարական ուսուցման արդյունքները:

**Հետազոտության գիտական նորույթը:**

1. ՈՒսումնասիրվել և վերլուծվել են հիմնախնդրի վերաբերյալ առկա տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները, որոնց հիման վրա հիմնավորվել են մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունները գործարարական անգլերենի դասընթացում,
2. ըստ մուլտիմեդիա տեխնոլոգիայի սկզբունքների՝ մշակվել է վարժությունների համակարգ,
3. հստակեցվել են մուլտիմեդիա տեխնոլոգիայով սովորող ուսանողների կարողունակությունների գնահատման չափանիշները,
4. մշակվել է մուլտիմեդիալ տեքստի, գերտեքստի, տեսանյութերի, վավերագրական և գեղարվեստական ֆիլմերի ընտրության և ուսուցման մեթոդական համակարգ,
5. մշակվել և առաջարկվել է մուլտիմեդիա տեխնոլոգիայով ստեղծված անգլերենի ուսուցման մոդելը, որը ներառում է ուսուցման ավանդական և այլընտրանքային մեթոդները, մուլտիմեդիալ վարժությունները, մուլտիմեդիալ սկզբունքները, մուլտիմեդիալ հնարները, մուլտիմեդիալ միջոցները,
6. հիմնավորվել է համապատասխան փորձարարական ուսուցման ընթացքում և արդյունքում մշակված մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառմամբ գործարարական

անգլերենի փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգի և ստեղծված մոդելի արդյունավետությունը:

**Հետազոտության տեսական նշանակությունը:**

Հետազոտության տեսական նշանակությունը պայմանավորված է գործարարական անգլերենի փոխներգործուն ուսուցման դասընթացում մուլտիմեդիա տեխնոլոգիայի ներդրման և կիրառման առանձնահատկությունների բացահայտմամբ, մուլտիմեդիա տեխնոլոգիայով ստեղծված գործարարական անգլերենի ուսուցման մոդելի ստեղծմամբ, բազմաբնույթ ՏՀՏ-ների կիրառմամբ, ուսուցման ավանդական և այլ ընտրանքային մեթոդների համադրմամբ, մուլտիմեդիա տեխնոլոգիայի գործարարական անգլերենի ուսուցման տեսանկյունից վերլուծության, մուլտիմեդիա տեխնոլոգիայով գործարարական փոխներգործուն անգլերենի ուսուցման մեթոդական համակարգի մշակմամբ:

**Հետազոտության գործնական նշանակությունը** հիմնավորվում է գործարարական անգլերենի ուսուցման մեթոդական արդյունավետ, օրինակելի համակարգի ստեղծմամբ, որը կարելի է հաջողությամբ կիրառել նաև այլ ESP դասընթացներում: Հետազոտության արդյունքները կարող են ուսումնասիրության նյութ դառնալ ոչ միայն գործարարական անգլերեն դասավանդողի, այլև սովորող ուսանողների համար, ինչպես մասնագիտական կողմնորոշման, այնպես էլ մասնագիտական անգլերենի ուսուցման դասընթացներում:

**Պաշտպանության են ներկայացվել հետևյալ դրույթները:**

1. Գործարարական անգլերենի դասընթացներն աստիճանաբար համալրվում են ուսուցման տեսալսողական միջոցներով: Մի կողմից՝ ուսանողներին հասանելի են թե՛ համակարգիչները, թե՛ համացանցը, թե՛ բջջային հեռախոսը: Մյուս կողմից՝ դրանք ոչ միշտ են կիրառվում գործարարական անգլերենի դասընթացում:
2. Մուլտիմեդիա նախագծի կարևորագույն գործառույթը սովորողների ինքնուրույն աշխատանքի կարողունակությունների ձեռքբերումն ու զարգացումն է: Առանց բազմաթիվ մուլտիմեդիա նախագծերում մասնակցություն ունենալու հնարավոր չէ շարունակաբար բարձրացնել մասնագիտական որակավորումը:
3. Էլեկտրոնային դասագիրքը յուրահատուկ մուլտիմեդիա նախագիծ է: Նրա կարևոր գործառույթը զննականություն ապահովելն է: Մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառումը գործարարական անգլերենի դասընթացում ապահովում է սահուն անցում ավանդական դասագրքից դեպի էլեկտրոնային դասագիրքը:
4. Մուլտիմեդիա տեխնոլոգիայով գործարարական անգլերենի ուսուցման մեթոդական համակարգի և մոդելի մշակման հիմքում ընկած են մուլտիմեդիա անհատականացման, կոնտենտի կամ բովանդակության կազմակերպման, ուսանողների ակտիվ մասնակցության, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման, անհատականացման, հետևողականության և տրամաբանության, բովանդակության հարմարվողականության, մոտիվացիայի և այլ սկզբունքներ:

**Հետազոտության բազան:**

Հետազոտության իրականացման համար փորձարարական բազա են հանդիսացել ՀՊՏՀ կիրառական ֆինանսների, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման, տեղեկատվական տեխնոլոգիաների և տվյալագիտության ֆակուլտետների և ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետների ուսանողների խմբերը:

**Հետազոտության հիմնախնդիրները ներկայացվել են** համապատասխան զեկուցումներով և հոդվածներով, որոնք քննարկվել են տարբեր գիտաժողովներում և սեմինարների ժամանակ:

**Հետազոտության արդյունքների արժանահավատությունն ու հիմնավորվածությունն** ապահովվում է մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման անհրաժեշտությամբ, նրա արդյունավետության տեսական և գործնական մակարդակներում հիմնավորվածությամբ, առաջադրված խնդիրների լուծմամբ, ինչպես նաև հետազոտության նախնական վարկածի հաստատմամբ:

**Աշխատանքը փորձաքննություն անցել է** ՀՊՏՀ օտար լեզուների ամբիոնում, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գերմանական լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոններում: Փորձարարական ուսուցումը կազմակերպվել է ՀՊՏՀ մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման, առաջին և երկրորդ կուրսերում:

**Հետազոտության ներդրումը:**

Հետազոտության արդյունքները ներդրվել են ՀՊՏՀ կիրառական ֆինանսներ, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման, տեղեկատվական տեխնոլոգիաների և տվյալագիտության ֆակուլտետներում, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են ութ հոդվածում (տես՝ անվանացանկը ատենախոսության սեղմագրի վերջում):

**Ատենախոսության ծավալը և կառուցվածքը:**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածից: Այն պարունակում է 9 գծապատկեր, 1 աղյուսակ, 5 տրամագիր,1 նկար: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 149 համակարգչային էջ:

## Ատենախոսության հիմնական բովանդակությունը

**Ներածության** մեջ հիմնավորվել են թեմայի արդիականությունը, հիմնահարցի մշակվածության աստիճանը, ներկայացվել են աշխատանքի նպատակն ու խնդիրները, մեթոդաբանական հիմքերը, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, գիտական նորույթը, սահմանվել են պաշտպանության ներկայացվող դրույթները, նկարագրվել են հետազոտության իրականացման փուլերը, ներկայացվել է աշխատանքի ծավալը:

**Ատենախոսության առաջին՝«Մուլտիմեդիա տեխնոլոգիայի բովանդակությունը, ներդրման տեսությունը և պրակտիկան»** խորագիրը կրող գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

**Առաջին ենթագլխում ՝ «Մուլտիմեդիա տեխնոլոգիայի հաղորդակցական, համագործակցային ուղղվածությունը»,** ներկայացված են կրթության ոլորտում թվային հաղորդակցության ու համացանցի օգտագործման, էլեկտրոնային ուսուցման,նորագույն տեխնոլոգիաների միջոցով գիտելիքի փոխանցման փուլերը:

Դիտարկված և վերլուծված են մուլտիմեդիա տեխնոլոգիայի բովանդակությունը, կիրառման ոլորտը: Գիտական փաստարկներով հիմնավորվում է, որ մուլտիմեդիա տեխնոլոգիան ապահովում է ուսուցման կառավարման համակարգի (LMS) ծրագրային գործառնությունը:

Բնութագրված են էլեկտրոնային ուսուցման գործիքները:

Հիմնավորվում է, որ LMS-ները կենտրոնացած են ուսուցման առցանց ծառայություններ մատուցելու գործընթացի վրա: Նրանք հանդես են գալիս որպես առցանց

բովանդակությամբ հարթակ տարբեր դասընթացներ կազմակերպելու համար, ներառյալ թե՛ տարժամանակյա /ասինխրոն/, թե՛ համաժամանակյա /սինխրոն/ դասընթացները: Ներկայացված և բնութագրված են LMS-ի ծառայությունների մատուցման ոլորտները և կրթության շուկայում LMS-ի կատարած գործառույթները, որոնք ինչ-որ առումով իրականացվում են կորպորատիվի եղանակով, բայց աչքի են ընկնում իրենց յուրահատկությամբ:

Նշվում է, որ մուլտիմեդիա տեխնոլոգիայի առաջ գալով դասավանդման մեթոդներում սահուն կերպով անցում կատարվեց նորագույն մի հարացույցի, որտեղ նորագույն այդ մեթոդներն այլևս համահունչ չէին հնաոճ վիրտուալ մեթոդներին: Տեսաբանված և մեկնաբանված են կրթական «տեխնոլոգիա», «վիրտուալ» հասկացությունները:

Առանձնակի նշվում է, որ հիմնվելով մեր ժամանակների հայտնի լեզվաբանների ու մեթոդիստների կարծիքների վրա, հանգել ենք այն գիտական հետևությանը, որ կրթական տեխնոլոգներն ու հոգեբանները, օգտագործելով կրթական և հոգեբանական ուսումնասիրություններն ու հետազոտությունները և համակցելով դրանք նորագույն տեխնոլոգիաների հետ, ստանում են մի ժամանակակից և արդյունավետ, իրականում կիրառելի ուսուցման մեթոդ՝ մուլտիմեդիա տեխնոլոգիա, որը լեզվի դասավանդման գործընթացը դարձնում է փոխներգործուն և հետաքրքիր, մանկավարժական տեսանկյունից դիտարկելի:

Հիմնավորվում է, որ փաստորեն, այսօր, անգլերենի դասընթացը վերածվել է վիրտուալ դպրոցի, որը շատ արագ օգտվում է համացանցի հնարավորություններից և շարունակաբար համալրում է իր գործիքակազմը նորարարական տեխնոլոգիաներով և դասընթացի մատուցման նորագույն մեթոդներով:

Ուսուցման նոր մեթոդների ներդրումը ենթադրում է նոր մոտեցումներ՝ նոր մեթոդաբանության կիրառում: Մուլտիմեդիա տեխնոլոգիայի ներդրման կարևոր պայման է նոր մեթոդաբանության, նոր գիտահետազոտական մեթոդների հետևողական ներդրում, որը հիմք կդառնա ուսուցման նոր սկզբունքների առաջադրման համար:
Այս համատեքստում դիտարկվել և բնութագրվել են մուլտիմեդիա տեխնոլոգիայի հիմքում ընկած վիրտուալ ուսուցման մեթոդները, որոնցից են բանավոր, տեսողական, գործնական, վիրտուալ մեթոդները, ինչպես նաև լեզվի դասավանդման հաղորդակցական մոտեցումը կամ մեթոդը, տեխնոլոգիական միջոցները:

Տրված է ավանդական և ժամանակակից ուսուցման մեթոդների բնութագիրը: Այս համատեքստում նշվում է, որ մուլտիմեդիա տեխնոլոգիաները թույլ են տալիս համապարփակ օգտագործել բանավոր, տեսողական և գործնական մեթոդները: Հիմնավորվում է, որ փոխներգործուն (ինտերակտիվ) ուսուցման մեթոդը գործընթացն ավելի հետաքրքիր է դարձնում, ինչը նպաստում է նյութի ավելի լավ յուրացմանը: Լինելով դասավանդման և ուսուցման նորարարական և ժամանակակից մեթոդ՝ մուլտիմեդիա տեխնոլոգիան վերափոխում է դասը վարելու ձևերը՝ միևնույն ժամանակ փոխելով լեզվական գիտելիք ձեռք բերելու մեթոդներն ու հնարավորությունները: Հիմնավորված է լեզվի դասավանդման հաղորդակցական մոտեցման կարևորությունը և՛ որպես ուսուցման միջոց, և՛ որպես վերջնական նպատակ:

**Երկրորդ ենթագլխում՝ «Տեսանյութերի ընտրության չափանիշները գործարարական անգլերենի դասընթացում»,** դիտարկված և բնութագրված են տեսանյութերի ընտրության տեսակները, չափանիշներն ու սկզբունքները՝ հաշվի առնելով գործարարական անգլերենի դասընթացի առանձնահատկությունները: Առանձնացված և

բնութագրված են գործարարական ուղղվածության տեսահոլովակների և տեսանյութերի տեսակները:

Տեսանյութերի ընտրության չափանիշներից առանձնացվում են ինտենսիվության, անհատականացման, բնագրայնության, տարածաշրջանային աշխարհագրական տեղեկատվության առկայության, միջանձնային հաղորդակցության տարբեր իրավիճակների, թեմայի համապատասխանության, բարոյական և էթիկական ներուժի առկայության, գեղարվեստական ձևավորման որակի, ժանրային բազմազանության, ընդհանուր կամ նեղ մասնագիտական կենտրոնացման հարցադրումները:
Տեսանյութերի ընտրության սկզբունքներից քննության են առնվել իրագործելիության, օտար լեզվի ուսուցման բովանդակության զարգացնող արժեքի, նորույթի սկզբունքները:

Բացահայտված և բնութագրված են մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման հիմնական սկզբունքները՝ բովանդակության կազմակերպման, ակտիվ մասնակցության, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման, անհատականացման,հետևողականության և տրամաբանության, բովանդակության հարմարվողականության, մոտիվացիայի խթանման:

**Երրորդ ենթագլխում՝ «Մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման սկզբունքները գործարարական անգլերենի դասընթացում»,** դիտարկված և բնութագրված են տեսանյութերի ընտրության տեսակները, չափանիշներն ու սկզբունքները՝ հաշվի առնելով գործարարական անգլերենի դասընթացի առանձնահատկությունները: Տեսանյութերի ընտրության չափանիշներից առանձնացվել են ինտենսիվության, անհատականացման, բնագրայնության, տարածաշրջանային աշխարհագրական տեղեկատվության առկայության, միջանձնային հաղորդակցության տարբեր իրավիճակների, թեմայի համապատասխանության, բարոյական և էթիկական ներուժի առկայության, գեղարվեստական ձևավորման որակի, ժանրային բազմազանության, ընդհանուր կամ նեղ մասնագիտական կենտրոնացման հարցադրումները:

Քննության են առնվել և բնութագրվել տեսանյութերի ընտրության իրագործելիության, օտար լեզվի ուսուցման բովանդակության զարգացնող արժեքի, նորույթի, կոնտենտի կամ բովանդակության կազմակերպման, մեդիա տարբեր տեսակների ինտեգրման, ուսանողների ակտիվ մասնակցության, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման, մուլտիմեդիա տեխնոլոգիայի շրջանակներում ձևավորված անհատականացման, ըստ բովանդակության հարմարվողականության, ազդանշանի, ավելորդության, տարածական կապի, ժամանակավոր կապի, նախապատրաստման և այլ սկզբունքներ, որոնք սկզբունքային դեր են կատարում տեսահոլովակների, տեսաֆիլմերի, գեղարվեստական և վավերագրական ֆիլմերի ընտրության գործընթացում:

**Ըստ տեսանյութի տեսակների՝** առանձնացված են կրթական, տեղեկատվության ստացման կամ ընկալման, տեղեկատվության փոխանցման և այլ տեսակներ:
Քննության են առնվել նաև տեսաֆիլմերը և տեսանյութերն՝ ըստ իրենց գործառույթների և ոճաժանրային առանձնահատկությունների: Հաշվի առնելով տեսանյութերի չափանիշները ներկայացվում են տեսանյութերի ընտրության, ցուցադրման հստակ փուլեր և ընթացակարգեր:

**Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունները գործարարական անգլերենի դասընթացում»,** բաղկացած է երեք ենթագլխից:

**Առաջին ենթագլխում՝ «Թվային պատմվածքը և TED դասախոսությունները որպես մուլտիմեդիա տեխնոլոգիայի կարևոր բաղադրիչներ»**, քննության են առնված թվային պատմվածքը և TED դասախոսությունները՝ որպես մուլտիմեդիա տեխնոլոգիայի կարևոր բաղադրիչներ:

Նշվում է, որ թվային պատմվածքն ուսուցման հզոր միջոց է, որի արդյունքում հանրությունն ակնկալում է ուսանողներից ձեռք բերել այս դարաշրջանին համահունչ քայլելու ունակություններ և գիտելիքներ: Թվային պատմվածքը նաև համակարգչահեն ուսուցման միջոց է, որն օգնում է պատմություններ ստեղծել և պատմել՝ օգտագործելով ժամանակակից տեխնիկական միջոցները և կրթական տեխնոլոգիաները:

Ներկայացվում է, որ ՀՊՏՀ մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման, կիրառական ֆինանսների ֆակուլտետներում, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետում իրականացվել է փորձարարական ուսուցում, որի նպատակն է եղել գործարարական անգլերենի դասավանդման կազմակերպումը մուլտիմեդիա տեխնոլոգիայով և մշակված մեթոդիկայով, ուսանողների ծանոթացումը թվային պատմվածքի ստեղծման ընթացակարգերի հետ, և այդ ոլորտում հմտությունների մշակումը՝ շարունակաբար ընդլայնելով մուլտիմեդիա միջոցների կիրառման սահմանները:

Փորձարարական ուսուցման **նախնական փուլում** ուսանողները փորձել են ստեղծել թվային պատմվածքներ իրենց նախասիրությունների մասին: Այս փուլում ուսանողները ընթերցում են տարբեր թվային պատմվածքներ, ստեղծված տարբեր գործարարների կողմից: Դա նպաստում է նախ և առաջ համապատասխան բառապաշարի յուրացմանը:

**Երկրորդ փուլում** խնդիր է դրվել թվային պատմվածքով ներկայացնել իրենց մասնագիտական դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները:

**Երրորդ փուլում** ուսանողներին առաջարկվել է պատմվածք ստեղծել գործարարական որևէ ոլորտում իրենց ապագա գործունեության մասին: Ուսանողների 70 %-ը դժվարություն է ունենում թվային պատմվածքի ընտրության գործում: Նրանք հիմնականում նախընտրում են դասախոսի կողմից առաջարկվող թեմաներ՝ 86 %: Ուսանողների 85 %-ը շատ արագ է առաջարկում անձնական խնդիրներին վերաբերող թեմաներ: Ուսանողների 94%-ը խնդրում է թվային պատմվածքը ստեղծելու համար իրենց տրամադրել համապատասխան բառապաշար: Ինքնուրույն բառապաշար ընտրողների թիվը մեծ չէ՝ 26 %: Արևմտյան գործարար աշխարհին վերաբերող թվային պատմվածք ստեղծողները կազմում են ուսանողների 36%-ը: ՀՀ տնտեսությանը վերաբերող թվային պատմվածք ստեղծողները կազմում են ուսանողների 74 %-ը:

Դրական է այն, որ որոշ ուսանողներ անդրադառնում են իրենց տարածաշրջանի գործարարական խնդիրներին:Նրանց թիվը կազմում է 64 %: Արդյունքների մաթեմատիկական և վիճակագրական վերլուծությունը՝ ներկայացված է տրամագրերի ձևով ( **տրամագիր 1**.): Փորձարարական հետազոտության արդյունքները ցույց են տալիս TED-ի արդյունավետ կիրառման դրական դինամիկան ապագա գործարարների շրջանում:




**Տրամագիր 1. Թվային պատմվածքի ստեղծման պայմանները:**

Ապրանքանիշի ճանաչելիության բարձրացման թեմայով թվային պատմվածք ստեղծելիս ուսանողները կիրառել են բջջային հեռախոս, տեսախցիկ, պատրաստի գովազդային տեսահոլովակներ վերցրած համացանցից, ինտերակտիվ գրատախտակ, համակարգիչ և արտացոլիչ: Նրանց մեծ մասը գովազդել է հայկական ապրանքանիշները՝ 86 %: 14 % ստեղծել է թվային գովազդային պատմվածքներ, որոնք վերաբերում են արևմտյան ծագում ունեցող ապրանքանիշներին:

Ուսանողների 26 %-ը ստեղծել է պատմվածքներ ապրանքի պատմությունների ցուցադրում թեմայով: Նրանք հիմնականում նախընտրել են արևմտյան ապրանքանիշները գովազդող տեսահոլովակները՝ 69 %:

Լսարանի կրթում թեմայով թվային պատմվածքներ է ստեղծել ուսանողների 36 %-ը: Նրանք փորձել են հիմնավորել իրենց մասնագիտության ընտրության նպատակահարմարությունը: Տոկոսները հաշվարկված չեն 100 տոկոսի սահմաններում, այսինքն՝ որոշ ուսանողները ընտրել են առաջին, երկրորդ, կամ երկրորդ, երրորդ թեմաները: Նրանց հնարավորություն է տրված ստեղծել պատմվածքներ բոլոր թեմաներով (**տրամագիր 2**):




**Տրամագիր 2. Ապրանքի պատմությունների ցուցադրում թեմայով:**

Ներկայացված են նաև ապագա գործարարների շրջանում TED-ի արդյունավետ կիրառման դրական դինամիկայի վերաբերյալ ՀՊՏՀ մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման, կիրառական ֆինանսների ֆակուլտետներում ուսանողներին ուղղված հարցման փորձարարական հետազոտության արդյունքները:

Հարցման ենթակա ուսանողների 69 %-ը նշում է, որ սիրում է ունկնդրել TED դասախոսությունններ: Նրանց 59 %-ը նշում է, որ սիրում է մասնակցել TED զրույցներին: TED-ի կայքի ստեղծմանը մասնակցել է ուսանողների ընդամենը 32 %-ը: Ուսանողների ընդամենը 29 %-ն են TED talks ֆակուլտետային կայքում բարձրաձայնում իրենց մասնագիտական խնդիրների մասին: Այդ կայքում ուսանողների 21 %-ը հրապարակում է իրենց գործնական խնդիրներն, 75 %-ը մասնակցում է գործարարական թեմաներով TED –ի դիտմանն առցանց, 89 %-ը նշում է, որ դասախոսն իրենց օգնում է պատրաստել TED ելույթ **(տրամագիր 3.)**:




**Տրամագիր 3. TED-ի կիրառման դինամիկան ապագա գործարարների շրջանում:**

Համեմատություններ անցկացնելով թվային պատմվածքի և TED-ի միջև՝ նշվում է, որ երկուսն էլ չնայած մանկավարժական նորարարական և համագործակցային մեթոդ լինելուն, որոնք կիրառվում են օտար լեզվի դասավանդման ընթացքում, առաջին հայացքից թվում է թե նմանատիպ դասավանդման մեթոդներ են, սակայն, երբ ուսումնասիրվում է դրանց ողջ բովանդակությունն ու կառուցվածքը, հասկանալի է դառնում, որ դասավանդման գործընթացում լիովին տարբերվում են երկու մեթոդների կիրառության ձևերը: Անշուշտ, նաև նշվում է, որ և՛ թվային պատմվածքը, և՛ TED-ը շատ արդյունավետ են հատկապես գործարարական անգլերենի ուսուցման գործընթացում:

**Երկրորդ ենթագլխում՝ «Մուլտիմեդիա նախագիծը գործարարական անգլերենի դասընթացում»,** դիտարկված և հիմնավորված է մուլտիմեդիա նախագծի կիրառման անհրաժեշտությունը գործարարական անգլերենի դասընթացում: Սահմանված են մուլտիմեդիա նախագիծը, ինչպես նաև տեղեկատվական, հետազոտական, ստեղծագործական, խաղային նախագծերի կիրառման առանձնահատկությունները գործարարական անգլերենի դասընթացում: Ներկայացված են մուլտիմեդիա նախագծի գործառական և բովանդակային բնութագրերը: Հիմնավորվում է այն գաղափարը, որ նախագծային մեթոդը կիրառելով գործարարական անգլերենի դասընթացում ուսանողները զարգացնում են ոչ միայն իրենց օտարալեզու հաղորդակցական կարողունակությունները, այլև մասնագիտական կարողունակությունը (կոմպետենտությունը) և ինքնուրույն աշխատանքի մշակույթը:

Բնութագրված են մուլտիմեդիա նախագծի գործառույթները գործարարական անգլերենի դասընթացում և դրանց իրականացման գործոնները:

Մուլտիմեդիա նախագիծը նախագծային մեթոդի կիրառման տեսանկյունից գործիքակազմի բազմազանության նոր մակարդակ է ենթադրում: Այն հագեցած է նորագույն տեխնոլոգիաներով, նորագույն հաղորդակցական-տեղեկատվական միջոցներով: Նրա կարևոր ձեռքբերումներից է էլեկտրոնային դասագիրքը, որի հեղինակները կարող են լինել նաև ուսանողները: Այսինքն՝ էլեկտրոնային դասագիրքը յուրահատուկ մուլտիմեդիա նախագիծ է: Նրա կարևոր գործառույթը  զննականություն ապահովելն է:

Համապատասխան հարցումը ՀՊՏՀ-ում իրականացված  89 ուսանողի շրջանում ցույց է տալիս, որ  նրանք հիմնականում ունեն բջջային հեռախոս և համակարգիչ: Եվ եթե հեռախոսից օգտվում են գրեթե բոլորը, երբ խոսվում է որևէ  նախագծի շրջանակներում հավաքագրել տեղեկատվություն, ապա համակարգիչ ունեն ուսանողների 86 %-ը: Նախագծերի իրականացման, ներկայացման ժամանակ նրանք օգտվում են ինտերակտիվ գրատախտակներից: Տոկոսով արտահայտած, նրանց  93%-ը հիմնականում օգտվում է ինտերակտիվ գրատախտակներից: Նախագծերի շուրջ կազմվող հարցերն ուսանողներն հիմնականում պահում են բջջային հեռախոսներում՝ 92%: 72% -ը տեղեկատվությունը պահում են համակարգչում: Արտացոլիչից օգտվում է ուսանողների 100 %-ը: Նկարահանում են նախագծի ընթացքը ուսանողների 69 %-ը: Շնորհանդեսներ (պրեզենտացիա) է պատրաստում ուսանողների 100 %-ը (արդյունքների մաթեմատիկական և վիճակագրական վերլուծությունը՝  ներկայացված տրամագրերի ձևով ( տրամագիր 4):




**Տրամագիր 4. Նախագծի իրականացման գործոնների մասին հարցման արդյունքները:**

Հետևություն է արվում, որ  փորձարարության արդյունքների վերլուծությմբ մուլտիմեդիա նախագծի կիրառումը գործարարական անգլերենի դասընթացում հնարավորություն է ընձեռում լիարժեքորեն բացահայտել ուսանողի ստեղծագործական ներուժը, ստեղծել յուրահատուկ տեղեկատվական-կրթական տիրույթ, որը նպաստում է սովորողների ճանաչողական գործունեության ակտիվացմանը:

**Երրորդ ենթագլխում՝ «Գործարարական անգլերենի դասընթացում մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման արդյունավետ մոդելը»,** ներկայացված է գործարարական անգլերենի ուսուցման մշակված մոդելի բովանդակությունը: Բնութագրված են նրա կառուցվածքային բաղադրիչները՝ ավանդական և այլընտրանքային մեթոդները, մուլտիմեդիա վարժությունները, մուլտիմեդիա տեխնոլոգիայի սկզբունքները, մուլտիմեդիա հնարները, մուլտիմեդիա միջոցները (գծապատկեր 1):

Առաջարկվող մոդելում կարևորվում են ուսուցման այլընտրանքային փոխներգործուն մեթոդները, մասնավորապես մուլտիմեդիա տեխնոլոգիայի շրջանակներում ձևավորված մեթոդները: Այդ առումով առաձնանում է թեմատիկ «ընկղման», մուլտիմեդիա էքսկուրսիա, մուլտիմեդիալ դասախոսության, մուլտիմեդիալ գործնական աշխատանքի, **նախագծային** մեթոդները: Ներկայացված և բնութագրված են նաև ստեղծագործական, հաղորդակցման մեթոդները:

Առաջարկվող մոդելի կառուցվածքում առանցքային նշանակություն ունի նախագծային մեթոդը, որի կարևոր գործառույթն է սովորողների ինքնուրույնության զարգացումը: Առաջարկվող մոդելում առանձնանում են մուլտիմեդիա հաղորդակցման մեթոդները, որոնք ինտերակտիվ համակարգեր են և ապահովում են աշխատանք տարբեր տեսակի տվյալների հետ՝ տեքստ, գրաֆիկա, անիմացիա, թվային պատկերներ, տեսանյութ, ձայն, խոսք:

Ներկայացված են գործարարական անգլերենի դասընթացում իրականացվող նախագծերի տեսակները, որոնցից են՝ տեղեկատվական, խաղային, հետազոտական և ստեղծագործական նախագծերը:Նշվում է, որ գործարարական անգլերենի ուսուցման նախնական փուլում արդյունավետ է ներմուծել մեծ քանակությամբ հետազոտական նախագծի օրինակներ թիրախային լեզվով: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև աշխատանքը մյուս նշված թեմաներով, քանի որ ուսանողները ոչ միայն համապատասխան բառապաշար են յուրացնում, այլև մասնագիտական բնույթի հարցեր են լուծում:

Այս համատեքստում նշվում է, որ մուլտիմեդիա նախագծի կիրառումը գործարարական անգլերենի դասընթացում հնարավորություն է ընձեռում լիարժեքորեն բացահայտել ուսանողի ստեղծագործական ներուժը, ստեղծել յուրահատուկ տեղեկատվական-կրթական տիրույթ, որը նպաստում է սովորողների ճանաչողական գործունեության ակտիվացմանը:

Հիմնավորվում է, որ նշված և այլ մեթոդներն իրենց առարկայական արտահայտություն չէին գտնի, եթե չկիրառվեին կոնկրետ ուսուցման հնարներ: Ներկայացված և բնութագրված են այդ հնարները, որոնք մշակված մոդելի կառուցվածքային բաղադրիչներ են:
Մուլտիմեդիա տեխնոլոգիայի սկզբունքներին համահունչ ընտրվել են առաջարկվող մոդելի տրամաբանությունը ներկայացնող վարժությունները:
Մուլտիմեդիա վարժությունները ներկայացնում են ուսումնական նյութի մեթոդական կազմակերպման նոր կառուցվածքային միավոր, որը մոդելավորվում և իրականացվում է հիպերտեքստի և մուլտիմեդիա տեխնոլոգիաների միջոցով ստեղծված հատուկ կրթական միջավայրում և թույլ է տալիս համատեղել տարբեր տեսակի խոսքային գործունեության իրականացման առաջադրանքներ:

**Գծապատկեր 1.**
**Մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառմամբ գործարարական անգլերենի ուսուցման արդյունավետ մոդելը**




Տրամաբանորեն այդ մոդելն այնպես է կառուցված, որ ամեն մի վարժություն կամ առաջադրանք համապատասխանում է մուլտիմեդիա տեխնոլոգիայի կոնկրետ սկզբունքի:

Ներկայացված են ՀՊՏՀ մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման, կիրառական ֆինանսների ֆակուլտետներում, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետներում փորձարարական ուսուցման կազմակերպման արդյունքները: Յուրաքանչյուր ստուգողական խմբում ուսանողների քանակն է 44, իսկ փորձարարական խմբում՝ 45: Ուսանողների կարողունակությունները գնահատվել են 20 բալանոց սանդղակով: Ուսանողների գիտելիքները գնահատվել են մեր մշակած հետևյալ չափանիշներով.

1. մուլտիմեդիա միջոցներով ներկայացնել ապրանքը,
2. մուլտիմեդիա միջոցներով ինքնուրույն ուսումնասիրել և բացահայտել տեղեկատվությունը,
3. մուլտիմեդիա միջոցներով ապահովել հետադարձ կապ և համագործակցություն,
4. իրականացնել ծրագրային ապահովման ցուցադրություններ,
5. ընտրել ըստ դասընթացի բովանդակության տեսանյութեր,
6. վերլուծել մասնագիտական բովանդակության վավերագրական ֆիլմեր,
7. վերլուծել մասնագիտական բովանդակության գեղարվեստական ֆիլմեր,
8. մուլտիմեդիա տեխնոլոգիայով դիդակտիկ խաղեր խաղալ,
9. մուլտիմեդիա տեխնոլոգիայով մասնակցել նախագծերի:

Ինչպես ցույց են տալիս ստուգողական և փորձարարական խմբերի արդյունքները, գրեթե բոլոր չափանիշներով փորձարարական խմբի ցուցաբերած արդյունքները գերազանցում են ստուգողական խմբի ցուցաբերած արդյունքներին:

**ՀՊՏՀ մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման, կիրառական ֆինանսների ֆակուլտետներում մուլտումեդիա տեխնոլոգիայով գործարարական անգլերենի ուսուցման արդյունքները փորձարարական և ստուգողական խմբերում /Երկրորդ կուրս/**

**Աղյուսակ 1.**

| Կարողունակություններ | Փորձարարական խումբ թիվ – 45 | | Ստուգողական խումբ թիվ – 44 | |
|---|---|---|---|---|
| | **Փորձից առաջ** | **Փորձից հետո** | **Փորձից առաջ** | **Փորձից հետո** |
| Կիրառել մուլտիմեդիա միջոցներ | 16 | 18 | 16 | 17 |
| Մուլտիմեդիա միջոցներով ներկայացնել ապրանքը | 12 | 16 | 12 | 14 |
| Մուլտիմեդիա միջոցներով ինքնուրույն ուսումնասիրել և բացահայտել տեղեկատվությունը | 15 | 18 | 14 | 16 |
| Մուլտիմեդիա միջոցներով ապահովել հետադարձ կապ և համագործակցություն | 14 | 18 | 14 | 16 |
| Իրականացնել ծրագրային ապահովման ցուցադրություններ, | 15 | 18 | 14 | 16 |
| Ընտրել ըստ դասընթացի բովանդակության տեսանյութեր | 14 | 17 | 13 | 15 |
| Վերլուծել մասնագիտական բովանդակության վավերագրական ֆիլմեր | 13 | 17 | 12 | 15 |
| Վերլուծել մասնագիտական բովանդակության գեղարվեստական ֆիլմեր | 11 | 16 | 11 | 14 |
| Մուլտիմեդիա տեխնոլոգիայով դիդակտիկ խաղեր խաղալ | 11 | 16 | 11 | 14 |
| Մուլտիմեդիա տեխնոլոգիայով մասնակցել նախագծերի | 12 | 17 | 13 | 15 |




**Տրամագիր 5. Մուլտիմեդիա տեխնոլոգիայով գործարարական անգլերենի ուսուցման արդյունքները փորձարարական և ստուգողական խմբերում:**

Նշվում է, որ փորձարարական ուսուցման ընթացքում, որը տևել է մեկ կիսամյակ, մշտապես առաջ է եկել ուսուցման ժամանակի խնդիրը, որը փոխհատուցվել է շարունակաբար ուսումնառության, այսինքն՝ արտալսարանային աշխատաժամանակի ավելացման շնորհիվ: Փորձարարական խմբի ուսանողներն աչքի են ընկնում սովորելու ավելի մեծ մոտիվացիայով: Երկու խմբերում էլ մշտապես հաշվի է առնվել ուսանողների սոցիալական ցանցերում ձեռք բերած մուլտիմեդիա տեխնոլոգիայով աշխատելու զգալի փորձը:

Փորձարարական խմբի ուսանողների առաջադիմությունն ապահովվում է մի քանի գործոնով: Նախ՝ նրանց առավելությունն ապահովվում է աշխատանքի պլանավորման արդյունքում: Երկրորդ՝ մշտապես տեղի է ունենում նրանց աշխատանքի դիտարկում՝ թե՛ նոր մուլտիմեդիա միջոցների յուրացման, թե՛ մուլտիմեդիա մեթոդների գործընթացում: Երրորդ գործոնն այն է, որ հնարավորինս պահպանվում է ավանդական և մուլտիմեդիա մեթոդների կիրառման հարաբերակցությունը:

Ատենախոսությունում առաջադրված հետազոտության խնդիրների լուծումը արտացոլված է եզրակացություններում :

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մանկավարժական գիտության արդի նվաճումների, կրթության թվայնացման արդի միտումների և մեթոդաբանության, մուլտիմեդիա, տեղեկատվական-հաղորդակցական և ուսուցման ժամանակակից այլ տեխնոլոգիաների կիրառման, ինչպես

նաև փորձարարական բազա հանդիսացած բուհերում իրականացված հետազոտական փորձարարության արդյունքների հիման վրա հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1. Հիմնախնդրի վերաբերյալ տեսական-հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը մեզ հնարավորություն է տալիս հիմնավորելու ՀՀ բաձրագույն կրթության ոլորտում դասավանդվող գործարարական անգլերենի դասընթացում մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառմամբ անգլերենի փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգի և մուլտիմեդիա տեխնոլոգիայով ստեղծված անգլերենի ուսուցման մոդելի կիրառման անհրաժեշտությունը՝ որպես ուսանողների գործարարական անգլերենի յուրացման արդյունավետությունը ապահովելու միջոց:
2. Բուհական համակարգում գործարարական անգլերենի դասընթացում առաջարկվող մոդելը ներառում է ավանդական և այլընտրանքային մեթոդները, մուլտիմեդիա վարժությունները, մուլտիմեդիա տեխնոլոգիայի սկզբունքները, մուլտիմեդիա հնարները և մուլտիմեդիա միջոցները
3. Գործարարական անգլերենի ուսուցման գործընթացում սկզբունքային դերակատարություն ունեն մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման սկզբունքները և մեթոդները, տեսանյութերի ընտրության չափանիշների որոշումը՝ մասնավորապես ուսանողների լեզվական, ստեղծագործական, հաղորդակցական կարողությունների, գործարարական մասնագիտական հմտությունների զարգացման և անհատական կրթական հետազծերի մշակման գործում: Մուլտիմեդիա տեխնոլոգիայի բոլոր փուլերում կարևորվում են հատկապես կոնտենտի կամ բովանդակության կազմակերպման սկզբունքները:
4. Տեսանյութերի ընտրության չափանիշներից առանձնացվում են ինտենսիվության, անհատականացման, բնագրայնության, տարածաշրջանային աշխարհագրական տեղեկատվության առկայության, միջանձնային հաղորդակցության տարբեր իրավիճակների, թեմայի համապատասխանության, բարոյական և էթիկական ներուժի առկայության, գեղարվեստական ձևավորման որակի, ժանրային բազմազանության, ընդհանուր կամ նեղ մասնագիտական կենտրոնացման չափանիշները:
5. Տեսանյութերի ընտրություն կատարելիս հիմնականում կարևոր չափանիշներ են՝ բառի արժեքը, ինտենսիվությունը, տեսանյութում տարբեր իրադրություններ ներառելը, տեսատեքստի սահմանափակ քանակությամբ անծանոթ բառապաշար, քերականական երևույթներ և նոր տեղեկատվության առկայությունը, որոնք բարձրացնում են սովորողների հետաքրքրությունը և վստահությունն ուսումնական նյութերի նկատմամբ և միտված են կարճ ժամանակում ուսումնական նյութի ամենաարագ և արդյունավետ յուրացմանը, ժամանակի և ռեսուրսների խնայողաբար օգտագործմանը:
6. Ընդհանուր առմամբ, գործարարական անգլերենի դասընթացում ուսանողներն աչքի են ընկնում ակտիվությամբ, հատկապես երբ խոսվում է ուսուցման խառը մեթոդների կիրառման մասին: Ավելին՝ պասիվ ուսանողներն ինչ-որ առումով կարող են խոչընդոտել մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառմանը: Մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառումն աստիճանաբար ճանապարհ է հարթում խառը մեթոդների արդյունավետ կիրառման համար:
7. Փորձարարական խմբի ուսանողների գործարարական անգլերենի յուրացման դրական շարժընթացը (դինամիկան) ապահովվել է մի քանի գործոնով: Նախ՝ նրանց առաջընթացը ապահովվել է աշխատանքի պլանավորման արդյունքում: Երկրորդ՝

մշտապես իրականացվել է նրանց աշխատանքի մշտադիտարկում՝ թե՛ նոր մուլտիմեդիա միջոցների յուրացման, թե՛ մուլտիմեդիա մեթոդների կիրառման գործընթացում: Երրորդ գործոնն այն է, որ հնարավորինս պահպանվել է ավանդական և մուլտիմեդիա մեթոդների կիրառման հարաբերակցությունը:Նշված գործոնների արդյունավետ ազդեցության մասին են վկայում փորձարարական հետազոտության արդյունքների վիճակագրական և մաթեմատիկական վերլուծությունը:

8. Հետազոտության ընթացքում մշակված և ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում դասավանդվող գործարարական անգլերենի դասընթացում մուլտիմեդիա տեխնոլոգիայով անգլերենի փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգի և մուլտիմեդիա տեխնոլոգիայով ստեղծված անգլերենի ուսուցման մոդելի ներդրման արդյունքում իրենց տրամաբանական լուծումն են ստացել հետևյալ խնդիրները՝
   - ըստ մուլտիմեդիա տեխնոլոգիայի սկզբունքների՝ մշակվել է վարժությունների համակարգ,
   - հստակեցվել են մուլտիմեդիա տեխնոլոգիայով սովորող ուսանողների կարողունակությունների գնահատման չափանիշները,
   - զարգացել են մուլտիմեդիա տեխնոլոգիայով սովորող ուսանողների տեխնոլոգիական միջոցների օգտագործման, անգլերեն լեզվանյութը յուրացնելու և այն գործնականում կիրառելու կարողությունները:

**Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են ատենախոսի հետևյալ գիտական հրապարակումներում:**


1. Սարգսյան Ք.Ա., Չալաբյան Ս.Ս., Անգլերենում պաշտոնական գործնական կողմնորոշմամբ բանավոր խոսքի ունակությունների զարգացման հարցի շուրջ, Օտար լեզուները Հայաստանում, Գիտամեթոդական հանդես N5, Երևան, 2015, էջ 37-42:

2. Սարգսյան Ք.Ա., Չալաբյան Ս.Ս.,Թվայնացված պատումը որպես ուսուցման մեթոդ, Մանկավարժական միտք 4(59), Երևան, 2015, էջ 21-24:

3. Саргсян К. А., Цифровой пересказ (digital storytelling) как интерактивный метод обучения в процессе преподавания, Управление инновациями: теория, методология, практика, XVI международная научно-практическая конференция, Новосибирск, 2016, с 171-175.

4. Սարգսյան Ք.Ա., Չալաբյան Ս.Ս.,Ինչպե՞ս ստեղծել թվայնացված պատում, Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, Գիտական հանդես, 3(21), Երևան, 2016, էջ 157-163:

5. Սարգսյան Ք.Ա., Հաղորդակցական մոտեցումը որպես օտար լեզվի դասավանդման մեթոդ,Բանբեր, ՀՊՏՀ, Գիտական հանդես 3(43), Երևան, 2016, էջ 148-153:

6. Սարգսյան Ք.Ա., Մուլտիմեդիա նախագիծը գործարարական անգլերենի դասընթացում, Հայագիտական հանդես N1 (68), Երևան, 2025, ISSN 1829-0531, էջ 369-384:

7. Սարգսյան Ք.Ա., Տեսանյութերի ընտրության չափանիշները գործարարական անգլերենի դասընթացում, Русский Язык в Армении, 2025 (1), Ереван, ISSN 1829-4162, с 359-377.

8. Սարգսյան Ք.Ա., Մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման սկզբունքները գործարարական անգլերենի դասընթացում, Հայագիտական հանդես N2 (69), Երևան, 2025, ISSN 1829-0531 էջ 332-347:

**САРГСЯН КРИСТИНЕ АШОТОВНА**
**ПРИМЕНЕНИЕ МУЛЬТИМЕДИА ТЕХНОЛОГИИ В ИНТЕРАКТИВНОМ ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ ДЕЛОВОМУ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13. 00.02 «Методика преподавания и обучения» (английский язык).
Защита диссертации состоится 30 октября 2025 года в 12 часов на заседании Специализированного совета 020 «Педагогика» КВОН РА по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна.

Адрес: 0010, Ереван, ул. Тиграна Меца, 17.
С диссертацией можно ознакомиться в библиотеке Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна.

Автореферат разослан 30 сентября 2025 г.

## РЕЗЮМЕ


**Актуальность исследования**

Современные тенденции глобализации свидетельствуют о том, что владение английским языком становится необходимым условием личностного и профессионального роста и развития. Очевидно, что обучение английскому языку не может быть эффективным, если использовать исключительно традиционные методы и технологии. Современные процессы цифровизации образования требуют постоянного внедрения новых технологий обучения, максимального повышения внутренней и внешней мотивации обучающихся, а также построения процесса преподавания английского языка на коммуникативной основе. В этом контексте на первый план выходит использование ИКТ, что ставит задачу изучения и внедрения информационных мультимедиа технологии.

Следует отметить, что деловой английский язык (Business English) тесно переплетается не только с общим английским (General English), но и с английским для специальных целей (ESP). Следовательно, представляется уместным рассматривать применение мультимедиа технологии именно в курсе делового английского языка.

С этой точки зрения исследовательская проблема обусловлена:

- ✓ необходимостью применения мультимедиа технологии в процессе преподавания,
- ✓ недостаточной степенью внедрения мультимедиа технологии в преподавание делового английского языка,
- ✓ необходимостью формирования и развития профессиональных и коммуникативных компетенций обучающихся.

**Целью исследования** является разработка и внедрение методической системы интерактивного обучения английскому языку с использованием мультимедиа технологии и модели обучения английскому языку с использованием мультимедиа технологии в курсе

делового английского языка, преподаваемого в системе высшего образования Республики Армения.

**Задачи исследования:**

1. изучить и проанализировать существующие теории и концептуальные подходы к проблеме, на основе которых будут обоснованы возможности использования мультимедиа технологии в курсах делового английского языка,
2. выявить и охарактеризовать особенности и принципы использования мультимедиа технологии в вузах,
3. выявить возможности повышения эффективности курсов делового английского языка с помощью ИКТ,
4. обосновать необходимость интерактивного обучения деловому английскому языку в Республике Армения с использованием мультимедиа технологии,
5. разработать методическую систему интерактивного обучения деловому английскому языку с использованием мультимедиа технологии,
6. разработать модель обучения деловому английскому языку с использованием мультимедиа технологии, которая в полной мере обеспечит эффективность усвоения языкового материала студентами,
7.обосновать целесообразность экспериментального процесса обучения и использования разработанных в результате мультимедиа технологии, эффективность методической системы и созданной модели интерактивного обучения деловому английскому языку.

**Научная новизна исследования заключается в следующем:**

1. Изучены и проанализированы существующие теории и концептуальные подходы к проблеме, на основе которых обоснованы возможности использования мультимедиа технологии в курсах делового английского языка,
2. Разработана система упражнений, основанная на принципах мультимедиа технологии,
3. Уточнены критерии оценки способностей обучающихся к обучению с использованием мультимедиа технологии.
4. Разработана методическая система отбора и преподавания мультимедийного текста, гипертекста, видеороликов, документальных и художественных фильмов.
5. Разработана и предложена модель обучения английскому языку с использованием мультимедиа технологии, которая включает:

традиционные и альтернативные методы обучения, мультимедийные упражнения, принципы мультимедиа, мультимедийные техники, мультимедийные инструменты.

6. Разработана методическая система интерактивного обучения деловому английскому языку с использованием мультимедиа технологии, которая была обоснована в ходе соответствующего экспериментального обучения.

**Теоретическая значимость исследования** обусловлена выявлением особенностей внедрения и применения мультимедиа технологии в интерактивном курсе делового английского языка, созданием модели обучения деловому английскому языку с

использованием мультимедиа технологии, использование различных ИКТ, сочетание традиционных и альтернативных методов обучения, анализ мультимедиа технологии с точки зрения преподавания делового английского языка, создание методической системы интерактивного обучения деловому английскому языку с использованием мультимедиа технологии.

**Практическая значимость исследования** обосновывается созданием методически эффективной, образцовой системы обучения деловому английскому языку, которая может быть успешно применена в других курсах ESP. Результаты исследования могут стать учебным материалом не только для преподавателей делового английского языка, но и для студентов, как в плане профессиональной ориентации, так и на профессиональных курсах английского языка.

**Объем и структура диссертации.** Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка использованной литературы и приложения. Текст диссертации содержит 9 диаграмм, 1 таблицу, 5 графиков. Общий объём диссертации составляет 149 компьютерных страниц. По теме диссертации опубликовано 8 статей.

**SARGSYAN KRISTINE ASHOT**

# APPLICATION OF MULTIMEDIA TECHNOLOGY IN THE PROCESS OF INTERACTIVE TEACHING OF BUSINESS ENGLISH

Thesis for the degree of Candidate of Pedagogical Sciences, Specialty 13. 00.02 - "Teaching and education Methodology" (English).

The defense of the thesis will be held on **October 30, 2025, at 12$^{00}$**, at the session of the Special Board 020 “Pedagogy” HESC RA to award scientific degrees under the Kh. Abovyan Armenian State Pedagogical University.

**Address:** 0010, Yerevan, Tigran Mets 17

The dissertation can be viewed in the library of the Kh. Abovyan Armenian State Pedagogical University.

The abstract was submitted on September 30, 2025.

## SUMMARY


**Relevance of the Research.**

Current globalization trends show that English language learning has become a necessary condition for personal and professional growth and development. It is obvious that English language teaching cannot be effective if only traditional teaching methods and technologies are used. Modern trends in the process of digitalization of education require the continuous integration of new teaching technologies, the maximization of learners’ intrinsic and extrinsic motivation, and the focus of the English language learning process on communicative skills. In this context, the use of ICT (Information and Communication Technologies) comes to the forefront, making it necessary to study and implement multimedia information technology.

It should be noted that Business English is closely intertwined not only with General English but also with English for Specific Purposes (ESP). Therefore,we consider that the application of multimedia technology in Business English courses is essential.

From this perspective,

**the main problem of our research is determined by:**

- the need to use multimedia technology in the process of teaching business English,
- the fact that multimedia technology is not sufficiently implemented in the process of teaching business English,
- the need to form and develop the professional and communicative competencies of learners.

**The purpose of the research** is to develop and implement a methodological system for interactive English teaching using multimedia technology and an English teaching model created by using multimedia technology in the business English course taught in the higher education sector of the Republic of Armenia.

**The research objectives are:**

1. to study and analyze the existing theories and conceptual approaches to the problem, based on which the possibilities of using multimedia technology in business English courses will be substantiated,

2. to identify and characterize the features and principles of using multimedia technology in universities,

3. identify opportunities to increase the effectiveness of business English courses through ICT,

4. substantiate the need for interactive teaching of business English in the Republic of Armenia

through multimedia technology,

5. develop a methodological system for interactive teaching of business English using multimedia technology,

6. to develop a business English teaching model created using multimedia technology, which will fully ensure the effectiveness of students' mastering the language material,

7. to substantiate the developed methodological system of interactive teaching of business English using multimedia technology during appropriate experimental training and the effectiveness of the created model.

**The scientific novelty of the research:**

1. The existing theories and conceptual approaches to the problem were studied and analyzed, on the basis of which the possibilities of using multimedia technology in business English courses were substantiated,

2. A system of exercises was developed according to the principles of multimedia technology,

3. The criteria for assessing the abilities of students learning with multimedia technology have been clarified,

4. A methodological system for selecting and teaching multimedia text, hypertext, videos, documentary and feature films has been developed,

5. An English language teaching model created with multimedia technology has been developed and proposed, which includes: traditional and alternative teaching methods, multimedia exercises, multimedia principles, multimedia techniques, multimedia tools,

6. substantiated during the relevant experimental training and as a result developed a methodological system for interactive teaching of business English using multimedia technology and the effectiveness of the created model.

**Theoretical significance of the research**

The theoretical significance of the research is due to the identification of the features of the introduction and application of multimedia technology in the interactive learning course of business English, the creation of a business English learning model created using multimedia technology, using various ICTs, combining traditional and alternative teaching methods, analyzing multimedia technology from the perspective of teaching business English, and developing a methodological system for teaching interactive business English using multimedia

technology and also for students studying, both in career orientation and professional English courses.

**The practical significance of the research** is justified by the creation of a methodologically effective, exemplary system for teaching business English, which can be successfully applied in other ESP courses. The results of the study can become teaching material not only for teachers of business English, but also for students, both in terms of career guidance but during professional English courses.

**Thesis volume and structure:**

The thesis consists of an introduction, two chapters, conclusion, a list of used literature and an appendix. It contains 9 diagrams, 1 table, 5 charts, 1 picture. The total volume of the thesis is 149 computer pages.

Eight articles have been published on the topic of the dissertation.